

քաղցրութեանն հացին կերակրոյ ի վերուստ ցաւդէ, եւ զլորամարզին ի թռչնոց տալ ապստամբող եւ դառնացող ժողովրդեանն, եւ ինքն Քրիստոս վեմ եղեալ՝ ընդ Նոսա շրջեր յանապատին յանջրդին, եւ զքաղցրութիւն ջուրցն ի ծարաւ Նոցա մատուցաներ, եւ խորհուրդ հանդերձելոցն՝ որ առ յապա լինելոցն եր՝ գուշակեր գաւազանաւն ի ձեռն Մովսէսի, վեմն խոցեալ՝ հոսեր Նոցա ջուր, զՆոսա անդ զառաջինսն արիւնակաւքն կեցուցաներ. եւ ինքն կերակրեաց ի սակաւ հացէ զժողովուրդն յանապատի անդ, եւ ըստ ծառոյն՝ որ զխոյն եբեր՝ ինքն զխաչէն պրկեալ կախեալ խաչեցաւ, եւ արիւնակաւն ըստ նմանութեան ի կողմն խոցեցաւ, եւ եհան մեզ անտի ջուր փրկութեան ի լուացումն սրբութեան ապաշխարութեան. յաղագս կենաց մերոց եւ ինքն վասն մեր հաց եղել, եւ զարիւնն իւր ըմպել ետ մեզ, զի զմարմինն ի մարմինն խառնեսցէ եւ զարիւնն յարիւնն, զի զաստուածութիւնն յոգիս մեր միացուցեալ, զմեզ ընդ Սուրբ Հոգւոյն, եւ ի վախճանի զմեզ բնակիցս աստուածութեանն արասցէ. արդ որ այսչափ երախտիս առնէր մեզ, մինչեւ մեք անգամ բանս զոհացողութեան փոխարէն շնորհս ոչ հատուցանեաք նմա, իսկ արդ զիա՞րդ վասն անուան Նորա արժանի եղեալք սակաւիկ մի թշնամանաց՝ սովամահ ինչ կարծիցէք լինել: 12 Ոչ այդպէս. այլ հաւատով խնդրեսցուք, եւ տացի մեզ կերակուր: 13 Իսկ արդ Նշան խնդրեմք, ոչ. այլ Նշան թերահաւատից պիտոյ է, եւ առ զչարսն դարձուցանելոյ յուղղութիւն. այլ մեզ, զիտէ Տէր զպիտոյսն մեր եւ զաւգտակարսն, եւ ըստ այնմ պատրաստէ զինչ եւ պիտոյ է մեզ: 14 Իսկ մեք ոչ այնպէս, որ քա՛ւ եւ մի լիցի, որպէս ասացաւն. ասէ, *Ազգ չար, Նշան խնդրէ՞ս*: 15 Իսկ մեզ կարեւորքն առանց ուրոյն ի մարդկան աղանդէն չիք հնար լինել: 16 Իսկ Տէրն կարող է եւ առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս, եւ կարող է տալ կերակուր. եւ արդարացուցանել կարող է, եւ արժանիս առնել՝ վասն իւրոյ անուանն պատրաստել մեզ մեռանել. տալ մեզ զսովորական ընդունելութիւն բնութեան մահուն, որ չերթայ ուրեք ի մարդկանէ, այլ պատճառս միայն առնէ զանուն իւր ի վերայ աներեւոյթ մարմնոյն պահէ՞, եւ իւրոյ արքայութեանն զմեզ բագորդս բաժանորդս առնէ: 17 Կարող է եւ ի խաղաղութեան վաղճանել, եւ առնել արժանիս արքայութեան կարգացն:

18 Չայս եւ այսպիսի եւ որ երթայր զիտ սորին՝ իբրեւ խաւսեցաւ, արդ՝ ասէ՝ դի՛ք ծունր ամենեքեան, զի արժանի միայն լիցուք մարդասիրութեանն Քրիստոսի: 19 Եւ ի դնել Նոցա երիցս անգամ ծունր եւ կալ յաղաւթս, եւ յարեաւ ի ծովու անդ հողմ սաստիկ, եւ սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ծուկն սաստիկ յոյժ, մինչեւ շեղջս շեղջս կուտեր ի ցամաքի կղզւոյն. եւ ընդ նմին

^ա Մատթ. Ժ2 4

¹ Յոր. մահէ